ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ ՊՈՒԱԿ

Հաստատում եմ՝
Երևանի պետական հումանիտար
քոլեջի տնօրեն
Մ.Մինասյան _____
«04» 20.24 թ.

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Երևան 2024

Երևանի պետական հումանիտար քոլեջի պատմությունը

Երևանի պետական հումանիտար քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) պատմությունը սկիզբ է առել 19-րդ դարի վերջին քառորդում: Առաջին շրջանը ստեղծման օրից մինչև 1918 թվականն է: 1881 թվականից ցարական արքունիքի նախաձեռնությամբ ստեղծված Երևանի ուսուցչական սեմինարիան պետք է պատրաստեր ռուսաց լեզու ու մշակույթ դասավանդող առաջավոր մտավորականների:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սեմինարիան տեղափոխվել է Ռուսաստան՝ Արմավիր, և բավականին ուշ կրկին վերադարձվել Հայաստան: Խորհրդային Հայաստանի կառավարությունը վերաբացել է ուսումնական հաստատությունը՝ <<Ռուսական մանկավարժական ուսումնարան>> անվամբ, որին անցել են Երևանի ուսուցչական սեմինարիայի ունեցվածքը, ուսումնական պլանները, ծրագրերը, կառուցվածքը և ամենակարևորը՝ ռուսաց լեզվի բարձրակարգ ուսուցիչներ պատրաստելու գլխավոր նպատակը:

Ռուսական մանկավարժական ուսումնարանը մի քանի բաժանմունք և ավանդույթներ ունեցող հաստատություն էր և այդպիսին էլ մնաց մինչև 1991 թվականը, երբ անկախ Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը Բրյուսովի անվան օտար լեզուներին կից ստեղծված <<Ինտերլինգվա>> քոլեջի և Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարանի լուծարումով և միացումով ստեղծեց խիստ արդիական մի ուսումնական հաստատություն, որն այսօր հայտնի է Երևանի պետական հումանիտար քոլեջ անվամբ:

Երևանի պետական հումանիտար քոլեջը Հայաստանի հանրապետության առաջին քոլեջն է և ԿԳ համակարգի ոսկե մեդալակիր :

Քոլեջը կրթությունէ տալիս հետևյալ մասնագիտություններով՝

1. **Գործավարություն**՝ օտար լեզվի խորացված իմացությամբ
2. **Արխիվավարություն**՝ օտար լեզվի խորացված իմացությամբ
3. **Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում**՝ օտար լեզուների խորացված իմացությամբ
4. **Նախադպրոցական կրթություն**
5. **Զարդային կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ**

6. **Բանկային գործ**
7. **Ապահովագրական գործ**

Երևանի պետական հումանիտար քոլեջի կողմից մշակված մի շարք ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր ներդրվել են հանրապետության տարբեր քոլեջներում:

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի պետական հումանիտար քոլեջի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումն է՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

ԵՊՀ քոլեջը մշտապես ձգտում է գերազանցության և նորարարության ուսուցման նաև հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում: Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ Քոլեջն ապահովում է միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիությունը, ուսումնական գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև մատչելիությունն և հավասարությունը:

ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Օգտագործելով իր մարդկային և նյութական ողջ ներուժն ու կարողությունները, Քոլեջը ձգտում է դառնալ միջին մասնագիտական կրթության բնագավառում ազգային ընդհանուր շահերը արտահայտող, ազգային մակարդակում իր կողմից մատուցվող ծառայությունների համադրելիությունը, մրցունակությունը և թափանցիկությունը ապահովող, աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների կոմպետենցիաների ձևավորմանը նպաստող կրթական միջավայր:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Փոփոխություններ		
Էջ	Կատարված փոփոխություն	Ամսաթիվ

Բաշխման ցանկ

Որակի ապահովման կենտրոն	Բնօրինակ
Քոլեջի տնօրեն	Կրկնօրինակ
Գրադարան	Կրկնօրինակ
Ամբիոններ	Կրկնօրինակ
Ուսումնական բաժին	Կրկնօրինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……5
Հապավումներ……6
Հիմնական հասկացություններ……..……..7
Որակի ապահովման քաղաքականություն……10
Որակի ապահովման համակարգ……..……11
Քոլեջի կառավարման համակարգում ներգավված հիմնական կառույցներն ու ստորաբաժանումները……13
Որակի ապահովման հիմնական բնագավառները……15
Որակն ապահովող ծրագրեր……..16
Որակի կառավարում……...16
Որակի գնահատում……17
Որակի ստուգում……..22
Մշտադիտարկում……25
Որակի ծարունակական բարելավման ռազմավարություն……27
Դասախոսական կազմ……28
Ուսումնական գործընթացների կազմակերպում……...29
ՄԿԾ մշակում, գնահատում և վերանայում……30
Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ……31
Հավելվածներ……32
ԵՊՀՔ կազմակերպական կառուցվածք……34

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակը գործողություն չէ, այլ՝ սովորույթ:
Արիստոտել

Կախված մոտեցումից և օգտագործման նպատակից՝ տարբերվում են որակի տարբեր սահմանումներ. որակը որպես գերազանցություն, որակը որպես համապատասխանություն սահմանված նպատակին, որակը որպես բարելավում, որակը որպես յուրաքանչյուր մարդու պատասխանատվություն և մեծագույն ներդրում ապագայի համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովումը մի գործընթաց է, որը նպատակաուղղված է որակի պահպանմանը և բարձրացմանը. այն է՝ դասավանդում և ուսումնառություն, հետազոտություններ, ծառայությունների մատուցում հասարակությանը, վերլուծություն, կադրերի հավաքագրում և այլ մեխանիզմներ ու համակարգեր:

Ձեռնարկում տրված են որակի ապահովման չափանիշները, հապավումները, հիմնական հասկացությունները, որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը, ինչպես նաև, բերված են մասնագիտական առարկայական/կրթական ծրագրերի մշակման, հաստատման և գնահատման, ուսանողների ուսումնառության, գիտելիքների ստուգման և գնահատման կարգերը, դասավանդման որակի գնահատման, որակի կառավարման մեթոդները:

Ձեռնարկը նախատեսվում է Քոլեջի համապատասխան ստորաբաժանումներում որակի ապահովման ընթացակարգերի իրականացման և մշտադիտարկման համար:

Երևանի պետական հումանիտար քոլեջի որակի ապահովման կենտրոնը ստեղծվել է 2012 թվականին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԵՊՀՔ- Երևանի պետական հումանիտար քոլեջ
ՈԱԱԿ- որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՁ – որակի ապահովման ձեռնարկ
ՈԱ – որակի ապահովում
ՈԱԿ/Պ – որակի ապահովման կառավարիչ/պատասխանատու
ՄՈՒՀ-մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄԿԾ- մասնագիտակն կրթական ծրագիր
ՈԱՇ-որակավորումների ազգային շրջանակ
ՄԿՈՒԶԱԿ –մասնագիտական կրթության և զարգացման ազգային կենտրոն

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհամապատասխանություն - պահանջմունք կամ սպասելիք, որը չի կատարվում:
Ատեստավորում (որակի գնահատում) - պետական կրթական չափորոշիչների պահանջների համապատասխան՝ ուսումնական հաստատությունների գործունեության և դրանց շրջանավարտների պատրաստվածության որակի, բովանդակության ու մակարդակի ամփոփիչ գնահատում:
Գիտելիք – Ուսումնառության միջոցով ձեռք բերված փաստացի, տեսական, գործնական և մասնագիտական տեղեկությունների յուրացման արդյունք՝ բնության, հասարակության, գիտության, տեխնիկայի, արտադրության ու բնապահպանության մասին:
Գնահատում - ուսումնառության ողջ ընթացքում և ավարտական փուլում սովորողի կրթական և մասնագիտական ձեռքբերումների և համապատասխան չափորոշիչների համադրելիության որոշում: Նպատակն է վերահսկել սովորողի առաջխաղացման և առաջադիմության ընթացքը:
Թեստ – հստակ հարցադրմամբ ձևակերպված հարցաշար՝ կից ներկայացվող պատասխանի հնարավոր մի քանի տարբերակներով:
Լիցենզավորում - ուսումնական հաստատության գործունեության թույլատրման գործընթաց («Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 16-րդ կետ):
ԿԳ Կանխարգելիչ գործողություն - գործողություն, որը ձեռնարկվում է հնարավոր անհամապատասխանության կամ այլ հնարավոր անցանկալի իրադրության պատճառի վերացման համար:
Կրթական ծրագիր - հաստատության կամ կրթության նախարարության կողմից գրված ծրագիր է, որը որոշում է յուրաքանչյուր առարկայի ուսուցման առաջընթացը ֆորմալ կրթության բոլոր փուլերում:
Կրթության որակ - կրթության համապատասխանության աստիճանը հասարակության, պետության, քաղաքացիների կողմից ներկայացված պահանջներին:
Համապատասխանության միջոցներ - կանոնակարգային պահանջներին համապատասխանությունը ցույց տալու մեթոդ, որի միջոցով հավաքագրվում և բացահայտվում են համապատասխանության հետ կապված բոլոր անհրաժեշտ տվյալները և /կամ շեղումները:

Համապատասխանության այլընտրանքային միջոցներ - համապատասխանության գոյություն ունեցող ընդունելի միջոցների այլընտրանքային միջոցներ:

Մոդուլ- դասավանվող առարկայի մաս հանդիսացող ուսումնական ծրագիր, որն ուսանողին տրամադրում է որոշակի մակարդակի և ծավալի տեղեկատվություն:

Ներքին ստուգում - ստուգում, որն իրականացվում է ամբողջ կազմակերպությունում և նրա ստորաբաժանումներում, գործունեության ընթացքում ձեռք բերած արդյունքների համապատասխանության սահմանման նպատակով պլանավորված արդյունքներին,

գործունեությանը (այդ թվում հեռանկարային և գործառնական միջոցառումներին) և կազմակերպությունում գործող փաստաթղթերի պահանջներին:

Որակի ապահովում - կրթության կառավարման համակարգ, որը միտված է կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների շարունակական բարելավմանը և մրցունակ դարձնելուն:

Որակի բարելավում - որակի պլանավորման և որակի մշտադիտարկման միջոցով կառավարվող որակի բարձրացման շարունակական գործընթաց:

Որակի կառավարում - կրթության որակն ապահովելու նպատակով կրթական համակարգի մակարդակով պարբերաբար իրականացվող միջոցառումների համակցություն՝ որակի բարելավման շեշտադրմամբ:

Որակի մշակույթ - որակի այնպիսի համակարգ, որը բնորոշ է ուսումնական հաստատության կազմակերպական մշակույթին:

Որակի ներքին ապահովման համակարգ -կառավարման կառուցվածքային և փաստաթղթավորված համակարգ, որը նկարագրում և իրագործում է տվյալ հաստատության որակի ապահովման քաղաքականությունը, խնդիրներն ու սկզբունքները, կազմակերպական լիազորություններն ու պատասխանատվությունները և իրականացման պլանը:

Որակի պլանավորում – գործողություններ, որոնք խնդիրներ և պահանջներ են սահմանում որակի համակարգի առանձին տարրերի կիրառման համար:

Որակի ստուգում – որակի գնահատման գործընթաց, որի միջոցով իրավասու լիազոր մարմինն ապահովում է (ստուգում է). ա) կրթական ծրագրերի որակի ապահովման ընթացակարգերի կամ բ) ողջ կրթական համակարգի որակի ընդհանուր ապահովման (ներքին և արտաքին) ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը սահմանված նպատակներին և դրանց փաստական իրականացումը:

Որակի վերահսկողություն – որակի ստուգման շարունակական գործընթաց:

Որակի քաղաքականություն – արտացոլում է ուսումնական կենտրոնի առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված է դրա զարգացման հայեցակարգի,

ռազմավարության, ռազմավարական պլանի և գործունեության հետ: Այն սահմանում է որակի պարզ և չափելի խնդիրներ կազմակերպության տարբեր գործառույթների և մակարդակների համար:

Որակի ապահովման եվրոպական չափանիշներ և ուղենիշներ (European Standards and Guidelines for Quality Assurance) – Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված փաստաթուղթ, որը ներառում է եվրոպական չափանիշներ և ուղենիշներ՝ որակի ներքին ու արտաքին ապահովման և որակի ապահովման եվրոպական գործակալությունների համար, ինչպես նաև երաշխավորություններ՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ռեգիստրի և Որակի ապահովման եվրոպական խորհրդատվական ֆորումի ստեղծման վերաբերյալ:

Ռազմավարական պլան - գործընթաց, որի ընթացքում կազմակերպությունը սահմանում է ապագայի իր տեսլականը և բացահայտում կազմակերպության նպատակներն ու խնդիրները:

Ռիսկ - կանխատեսված հավանականության և յուրաքանչյուր հնարավոր հետևանքի լրջության հանրագումարը:

Ստուգման ծրագիր - մեկ կամ մի քանի ստուգումների ամբողջություն, որը պլանավորված է որոշակի ժամանակահատվածի համար և ուղղված է որոշակի նպատակի:

Ստուգում - ստուգման վկայությունների ստացման և դրանց առարկայական գնահատման համակարգված, անկախ և փաստաթղթերով հիմնավորված գործընթաց, աուդիտի չափանիշներին համապատասխանության աստիճանի որոշման նպատակով:

Վերջնարդյունքներ – ծրագրերից և/կամ սահմանված նպատակներից ակնկալվող կամ ձեռք բերվող արդյունքներ:

ՈՒԳ Ուղղիչ գործողություն - գործողություն, որը ձեռնարկվում է հայտնաբերված անհամապատասխանության պատճառի կամ այլ անցանկալի իրադրության վերացման համար:

Ունկնդիր - սահմանված կարգով արհեստագործական կամ միջին մասնագիտական լրացուցիչ ծրագրով ուսումնառող կամ որակավորման դասընթացին մասնակցող անձ:

Ուսանող – ուսումնական հաստատությունում սահմանված կարգով ընդունված և կրթական հիմնական ծրագրով ուսումնառող անձ:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման քաղաքականությունը նպատակների, խնդիրների, ինչպես նաև ռազմավարական սկզբունքների և արժեքների հավաքական գաղափարն է: Այն սահմանում է սկզբունքային մոտեցումները որակի ապահովման հիմնահարցերին և դրանց իրագործման ուղիներին:

ԵՊՀՔ-ի որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել ուսումնական և կառավարչական գործընթացների որակը և արդյունավետությունը:

Այդ քաղաքականությունն ընդգրկում է ուսումնական կենտրոնի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում որակի ապահովումը՝ նպատակ ունենալով համապատասխանեցնելու դրանք ռազմավարական նպատակներին և ապահովելու ուժերի առավելագույն ներդրում այդ նպատակների իրականացման համար:

ԵՊՀՔ-ի կողմից սահմանված որակի նպատակները չափելի են և՝ համաձայնեցված որակի քաղաքականության հետ:

Նպատակների նվաճումը պլանավորելիս Քոլեջը պետք է հստակ պատկերացնի, թե ինչ է պետք անել, ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ, ով է պատասխանատու, երբ կավարտվեն այդ գործողությունները և ինչպես կգնահատվեն արդյունքները:

Որակի ապահովման քաղաքականության դրույթները վերահսկում է Քոլեջի տնօրենը՝ որակի համակարգում ակնկալվող ձեռքբերումներն ապահովելու նպատակով:

ԵՊՀՔ-ի որակի ապահովման քաղաքականության խնդիրներն են.

– ապահովել որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը Քոլեջի առաքելությանը, նպատակներին, խնդիրներին և միջազգային չափանիշներին,

– պահպանել որակի չափանիշները, ներդաշնակեցնել և իրականացնել ՈԱ (որակի ապահովում) գործընթացները ԵՊՀՔ-ի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում,

– նպաստել որակի շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանն ու հետագա զարգացմանը, ապահովել որակի մշակույթի ստեղծման նախադրյալներ,

– շարունակական բարելավման համար բացահայտել Քոլեջի գործունեության ուժեղ և ուշադրության արժանի ոլորտները կարճաժամկետ և երկարաժամկետ միջակայքերում,

– պահպանելով գիտակրթական բնագավառում առկա ձեռքբերումները՝ իրականացնել բարձրորակ կրթություն, պարբերական վերանայումների միջոցով շարունակաբար բարելավել ՈԱ համակարգը, կատարելագործել և արդիականացնել ՈԱ գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը:

Քոլեջի աշխատակազմը պետք է.

– աջակցի որակյալ ուսումնառության գործընթացին՝ ապահովելով համապատասխան բոլոր պաշարներով, (ուսումնական/դիդակտիկ նյութեր, ձեռնարկներ, ուղեցույց նյութեր, ծրագրեր և այլն…),

– երաշխավորի, որ որակի ապահովումը ողջ աշխատակազմի առաջանային պատասխանատվությունն է,

– սերտորեն համագործակցի որակի բաժնի (կառավարչի) հետ,

– պարզ կերպով սահմանի բոլոր աշխատողների անհատական պատասխանատվությունները և պարտականությունները,

– մշակի և իրականացնի վտանգների (ռիսկերի) բացահայտման և կառավարման ընթացակարգեր, ներառյալ վտանգների հաշվեգրության համակարգը,

– համապատասխանի կրթության ոլորտի պահանջներին և ստանդարտներին,

– երաշխավորի համապատասխան կրթությամբ, որակավորմամբ և հմտություններով մասնագետների առկայությունն ուսումնական գործընթացում:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Որակի ապահովման համակարգը ներկայացնում է Քոլեջի գործունեությանը վերաբերող պլանավորման, մշտադիտարկման, խնդիրների վերհանման, բարելավման միջոցառումների ամբողջություն:

Որակի ապահովման համակարգի ձևավորումը, սովորաբար, սկսվում է տարբեր շահակիցների ակնկալիքների վերհանումից, որոնք հետագայում կիրառվում են ուսումնական կենտրոնի գործունեությունը գնահատելիս: Գնահատմանը հաջորդում է բարելավմանը միտված նոր գործողությունների պլանավորումը, ինչպես նաև դրանց արդյունավետության գնահատումը:

Որակի ապահովման համակարգը սահմանում է մի շարք ընթացակարգեր, մասնավորապես՝

– որակի ապահովման ձեռնարկի մշակում,
– որակի ապահովմանն ուղղված միջոցառումների կառավարում,
– փաստերի և տվյալների հավաքագրում,
– ծառայությունների որակի գնահատում,
– անձնակազմին որակի ապահովման համակարգին ծանոթացում և ուսուցում,
– որակի համակարգի գնահատում և կատարելագործում
– ԵՊՀՔ-ի զարգացման ծրագրի հստակեցում:

Ծանոթություն. ԵՊՀՔ բոլոր ընթացակարգերը պահպանվում են թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Էլեկտրոնային տարբերակով ամբողջական փաթեթը տեղադրված է ԵՊՀՔ սերվերում և հասանելի է Քոլեջի համապաստասխան աշխատակկիցների համար:

Որակի ապահովման ընթացակարգերը մասնագիտության կրթական ծրագրի/ծառայության դեպքում պետք է կենտրոնանան.

- ծրագրի/ծառայության խնդիրների վրա,
- ծրագրի/ծառայության՝ իր առջև դրվածխնդիրներին համապատասխանությունը հաստատող փաստերի վրա,
- անհամապատասխանությունները վերացնելու և բարելավումներ կատարելու գործընթացների արդյունավետության վրա:

Որակի ներքին ապահովման համակարգի հավաստման չափանիշներ

Հաստատության որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետությունն ու հուսալիությունը երաշխավորելու համար այն պետք է պարբերաբար վերանայվի արտաքին գնահատման համար լիազորված մարմնի կողմից: Արտաքին վերանայման չափանիշները հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա.

Արտաքին վերանայում իրականացնող մարմինը պետք է.

- ունենա պաշտոնական կարգավիճակ,
- ունենա համապատասխան մարդկային/ֆինանսական պաշարներ,
- ունենա հստակ և բացահայտ նպատակներ և խնդիրներ արտահայտող առաքելություն,
- լինի անկախ և ինքնուրույն,
- ունենա որակի ներքին ապահովման ոլորտում հրապարակված քաղաքականություն և համապատասխան փաստաթղթեր (չափանիշներ և գործընթացներ),
- ունենա հաշվետվողականություն ապահովող մեխանիզմներ:

Քոլեջի որակի համակարգը ստեղծելիս հաշվի են առնվել

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից մշակված ուղենիշները, չափանիշներն ու չափորոշիչները, որակի ներքին ապահովման եվրոպական ESG ստանդարտները, ԻՍՕ 9001:2016-ի (Որակի կառավարման համակարգեր) պահանջները, միջին մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող օրենքները/որոշումները:

ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

1.Քոլեջի կառավարման խորհուրդը՝

- հաստատում է քոլեջի որակի ապահովման քաղաքականությունը, որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը, քոլեջի տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջադրում բարելավման խնդիրները:

2. Ուսումնամեթոդական խորհուրդը՝

- Ուսումնամեթոդական խորհուրդը քոլեջում ուսումնամեթոդական հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու ԵՊՀՔ-ում տարվող ուսումնական և մեթոդական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

3.Քոլեջի տնօրենը՝

- ղեկավարում է քոլեջի որակի ապահովման քաղաքականության և համապատասխան ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում որակի ապահովման համակարգի ներդաշնակ գործունեությունը:

4.Քոլեջի ուսումնական բաժինը՝

- կազմակերպում և ղեկավարում է ուսումնական մասի աշխատանքները և պատասխանատվություն է կրում դրանց որակի, ՈՒՄ խնդիրների ու գործառույթների ամբողջական իրականացման համար,
- պլանավորում և համակարգում է ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համտեղ ԵՊՀՔ-ի բոլոր մասնագիտությունների ուսումնական գործընթացները:

5. Որակի ապահովման կենտրոն՝

- ԵՊՀՔ-ի ստորաբաժանում է, որն իրականացնում է որակի ներքին ապահովման գործառույթներ կրթության և կառավարման բովանդակության, մեթոդների և գնահատման բնագավառում:

6. Կարիերայի կենտրոն

- ԵՊՀՔ-ի ստորաբաժանում է, որը զբաղվում է քոլեջի շրջանավարտների և ուսանողների զբաղվածության, մրցունակության բարձրացման և աշխատաշուկայում ճիշտ կողմնորոշման խնդիրներով:

7. Պրակտիկայի կազմակերպման պատասխանատու

- իրականացնում է քոլեջի որակի ապահովման համակարգի կառավարումն ու վերահսկումը, ապահովում է գործառնական կապերն ու փոխգործակցությունը ներգրավված հիմնական կառույցների միջև, հաստատում է որակի ապահովման/գնահատման ընթացակարգերը,

կրթական ծրագրերի ստանդարտներն ու որակավորման պահանջները, որակի ապահովմանն առնչվող կանոնակարգային և նորմատիվ այլ փաստաթղթեր:

6.Քոլեջի ամբիոնների վարիչները՝

- պատասխանատու են ամբիոնի մակարդակով որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար, կազմակերպում են ամբիոնի կրթական ծրագրերի մշակման, իրականացման մոնիթորինգի, պարբերական վերանայման ու կատարելագործման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան,
- ամբիոնի շրջանակներում ապահովում են քոլեջի որակի ապահովման քաղաքականության ու ռազմավարության իրականացումը,
- ապահովում են անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, տեխնիկական ռեսուրսներ, գրականություն և այլն) և ուսումնառության օժանդակող ծառայություններ կրթական ծրագրերի իրականացման համար,
- կազմակերպում են ամբիոնի աշխատանքների ինքնավերլուծություն՝ ինքնագնահատման գործընթացի շրջանակներում:

6.Քոլեջի ուսանողները՝

- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- մասնակցում են քոլեջի որակի ապահովման գործընթացներին որպես ուսանողական ինքնակառավարման մարմնի (ուսանողական խորհուրդ) ներկայացուցիչներ,
- համաձայն սահմանված ընթացակարգի՝ մասնակցում են ստորաբաժանման ինքնավերլուծության գործընթացին:

8.Պրակտիկայի կենտրոն՝

- ԵՊՀՔ-ի ստորաբաժանում է, որն իրականացնում է պրակտիկաների կազմակերպման և անցկացման գործընթացը:

9.Արխիվ՝

- ԵՊՀՔ ստորաբաժանում է, որը զբաղվում է ԵՊՀՔ –ի արխիվային փաստաթղթերի պահպանությամբ, համալրմամբ, հաշվառմամբ:

7.Արտաքին գնահատողները (փորձագետները, գործատուները)՝

- կատարում են կրթական ծրագրերի արտաքին փորձաքննություն,
- ընդգրկված են շրջանավարտների եզրափակիչ (ամփոփիչ) ատեստավորման հանձնաժողովներում,
- քոլեջի նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացներին,
- մասնակցում են կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներին:

Ծանոթություն. Քոլեջի բոլոր աշխատակիցների գործառույթների մանրամասն նկարագիրը տրված է իրենց պաշտոնի անձնագրում:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Կենտրոնի ՈԱ համակարգում ներառված գործընթացները, մեխանիզմները, չափորոշիչներն ու ընթացակարգերը պետք է հնարավորություն ընձեռեն գնահատելու հետևյալ բնագավառների որակը.

1.Մասնագիտական կրթական ծրագրեր

ԵՊՀՔ-ում, մասնագիտական կրթական ծրագրերի մշակումն ու վերանայումը իրականացվում է Քոլեջում գործող <<Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի>>, իսկ դրանց որակի գնահատումը՝ <<Կրթական ծրագրերի որակի գնահատման քաղաքականության>> դրույթներով:

Կրթական ծրագրի մշտադիտարկման առաջնային նպատակը ծրագրի իրականացման որակի և միջոցների օգտագործման գնահատումն է:

2. Դասախոսական կազմ

Դասախոսական կազմի որակի ապահովումը ենթադրում է ուսումնամեթոդական, մասնագիտական և ընդհանուր գիտելիքների, կարողությունների և հմտությունների շարունակական զարգացում, ինչը ներառում է ուսումնառության և դասավանդման գնահատում, դասախոսների վերապատրաստում և կատարելագործում, դասախոսական պաշտոնների տեղակալման, տարակարգային առաջքաշման և նյութական խրախուսման գործընթացներ:

3. Դասավանդում և ուսումնառություն

Դասավանդման և ուսումնառության որակի գնահատումը ներառում է դասալսումները տնօրենի, որակի ապահովման պատասխանատուի, ուսումնական բաժնի վարիչի և ամբիոնների կողմից, առաջավոր փորձի փոխանակումը, ուսումնառության նյութերի, ուսանողների կողմից դասախոսների, դասընթացների և դասավանդման որակի գնահատումը, դասախոսների որակավորման բարձրացումը և մասնագիտական վերապատրաստումները:

4. Ուսանողների գնահատման համակարգը

Քոլեջում գործող գնահատման միասնական համակարգը պարունակում է գնահատման հստակ չափանիշներ ու չափորոշիչներ, ինչպես նաև աջակցող ընթացակարգեր, որոնք ապահովում են ուսանողների գիտելիքների գնահատման առարկայականությունը և գնահատականների նշանակման հուսալիությունը:

ՈՐԱԿՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Որակն ապահովող ծրագրերը ընդգրկում են բոլոր պլանավորած և պարբերաբար իրականացվող գործողությունները, որոնք անհրաժեշտ են ուսուցման գործընթացի պատշաճ իրականացման համար:

ԵՊՀՔ-ում որակի ապահովման ծրագրերն իրականացվում են համապատասխան ստուգաթերթերով (Տես, Հավելվածներ բաժնում), որոնք նպատակաուղղված են գործընթացների գնահատմանը, թերի կամ սխալ կատարվող աշխատանքների, բացթողումների բացահայտմանը, դրանք ուղղելուն, աշխատանքային անվտանգություն և արդյունավետություն ապահովելուն:

Որակն ապահովող ծրագրերը մշակվում և իրականացվում են որակի ապահովման պատասխանատուի կողմից: Որակն էապես կախված է հաստատությունում ձևավորված մշակույթից, որը ենթադրում է վերլուծական գործունեություն, թափանցիկություն և շարունակական բարելավում:

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Որակի համակարգի սահմանած չափանիշները, չափորոշիչներն ու կատարողականի ցուցիչները պարբերաբար վերանայվում են՝ երաշխավորելու համար, որ դրանք վավեր են, արդիական և համապատասխանում եմ են որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին և զարգացումներին:

Որակի կառավարման գործընթացներ

Ռազմավարական պլանավորում.

- որակի ոլորտի ռազմավարության, քաղաքականության և նպատակների մշակում,
- որակի ապահովման համակարգի պլանավորում և զարգացում:

Որակի կառավարման համակարգի վերլուծություն.

- որակի ապահովման համակարգի վերլուծություն ուսումնական կենտրոնի ղեկավարության կողմից,
- տեղեկատվությամբ ապահովում:

Հիմնական գործընթացներ.

- նախագծում և մշակում,
- նախապատրաստում ուսումնական գործընթացին,
- ուսումնական գործընթացի իրականացում,
- շահառուների բավարարվածության աստիճանի վերլուծություն

Օժանդակող գործընթացներ.

- անձնակազմի կառավարում,
- տեղեկատվական միջավայրի ապահովում և կառավարում,
- ուսումնամեթոդական գործունեության ապահովում և կառավարում,
- նյութատեխնիկական մատակարարման ապահովում և կառավարում:

ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՊՀՔ-ի ներքին որակի գնահատումն ուղղված է Քոլեջի կրթական գործունեության ուսումնասիրմանը, գնահատմանն՝ ըստ ուսումնասիրվող մասնագիտությունների և մատուցվող ծառայությունների, դրանց բարելավմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Այն աշխատանքային քաղաքականության և ընթացակարգերի փաստաթղթերով հաստատված մանրամասն և համակարգված վերանայում է, որի համար հիմք են հանդիսանում պարբերական ստուգումների արդյունքները: Որակի գնահատումը նպատակ ունի բացահայտելու, ուղղելու և կանխելու հնարավոր անհամապատասխանությունները:

Կրթության որակը քոլեջի կողմից դիտարկվում է որպես ռազմավարական միջոց վերջինիս գործունեությունն ավելի լայն շրջանակներում ճանաչելի դարձնելու համար՝ կարևորելով այնպիսի կրթական ծրագրերի և կրթական ծառայությունների տեղծումն ու տրամադրումը, որոնք միտված են բավարարելու ազգային և հանրային կարիքները:

Որակի ապահովման համակարգի ամբողջ տեղեկատվությունը ամփոփող հիմնական փաստաթուղթը որակի կառավարման համակարգի վերլուծությունն է, որը յուրաքանչյուր տարի քննարկվում է քոլեջի տնօրինական խորհրդում: Վերլուծությունն իր մեջ ներառում է՝

- Որակի նպատակների իրականացման վերլուծություն ինչպես քոլեջի մակարդակով, այնպես էլ առանձին ստորաբաժանումների մակարդակով:
- Շահակիցների բավարարվածության վերլուծություն (ուսումնառողներ, դասավանդող անձնակազմ, գործատու):
- Օժանդակող գործընթացների արդյունավետության գնահատում:

- Մենեջմենթի գործընթացների արդյունավետության գնահատում:
- Ներքին աուդիտների արդյունքների վերլուծություն:
- Շահակիցների արձագանքի և առաջարկների ուսումնասիրում և վերլուծություն:
- Քոլեջի գործունեության ինքնագնահատման արդյունքներ:

ԵՊՀ քոլեջի որակի կառավարման և գնահատման հիմքում դրված են հետևյալ սկզբունքները.

- **համակարգային մոտեցում,**
- **առաջնորդում,**
- **բարելավում,**
- **գործընթացային մոտեցում**:

Համակարգային մոտեցում

ԵՊՀՔ-ի գործունեության բոլոր ոլորտները՝ ուսումնական և վարչական, ենթակա են գնահատման և հաշվետվողականության: Քոլեջը խրախուսում է դասախոսական և վարչական կազմի ընդլայնված մասնակցությունը որակի ապահովման և բարելավման գործընթացներին, խթանում անհատական նախաձեռնությունները ուսումնական և վարչական ստորաբաժանումների ՈԱ գործընթացներում:

Առաջնորդում

Քոլեջի ղեկավարը պետք է ցուցադրի իր առաջնորդումը և պարտավորությունը որակի կառավարման համակարգի նկատմամբ.

- պատասխանատվություն կրելով Քոլեջի որակի կառավարման համակարգի արդյունավետության համար,
- ապահովելով որակի կառավարման համակարգի սերտաճումը Քոլեջի գործարար գործընթացներին,
- ապահովելով որակի կառավարման համակարգն անհրաժեշտ հասանելի ռեսուրսներով,
- խթանելով գործընթացային մոտեցման կիրառմանը և ռիսկերին կողմնորոշված մտածելակերպը,
- աջակցելով Քոլեջի որակի կառավարման համակարգի արդյունավետությանը նպաստող անձանց,
- օժանդակելով բարելավմանը:

Բարելավում

ԵՊՀՔ-ն ունի որակի կառավարման համակարգի գործընթացների պիտանիությունը, համապատասխանությունն ու արդյունավետությունը անընդհատ բարելավելու միտում և առաջնորդվում է հետադարձ կապի վրա հիմնված ՊԻՍԳ (պլանավորել-իրականացնել-ստուգել-գործել) մոդելով՝ Դեմինգի ցիկլով (նկ. 1):

Դեմինգի ցիկլը առաջադրանքների իրականացման ցիկլային հաջորդականություն է, որն ուղղված է որակի շարունակական բարելավմանը:



Նկ.1. Դեմինգի ցիկլ

Պլանավորում դաշտը շեշտադրում է որակի ապահովմանն ուղղված ռազմավարական պլանավորումը:

Իրականացում դաշտը շեշտադրում է կրթական գործընթացները, որոնք ուղղված են որակի ռազմավարության (քաղաքականության) ներդրմանը և իրականացմանը:

Ստուգում դաշտը նախանշում է այն քանակական և որակական ցուցիչները, որոնք սահմանում են, թե արդյո՞ք տվյալ ծրագրի նպատակները իրագործված են:

Գործելու դաշտը ենթադրում է ծրագրերի վերանայում, ուղղիչ գործողություններ և վերամշակումներ՝ ուղղված ամբողջ կրթական գործունեությանը կամ հստակ գործընթացին:

Գործընթացային մոտեցում

ԵՊՀՔ-ի որակի կառավարման համակարգը առաջնորդվում է գործընթացային մոտեցման մոդելով, որը թույլ է տալիս կազմակերպությանը հսկել փոխհարաբերությունները և փոխադարձ կապվածությունը համակարգի բոլոր գործընթացների միջև, և.

1) ընկալել և հետևողականորեն կատարել պահանջները,
2) հասնել գործընթացների արդյունավետ իրականացմանը,
3) բարելավել գործընթացները տեղեկատվության գնահատման հիման վրա:

Կառավարման գործընթացային մոտեցումը համարվում է կառավարման համակարգերի հիմքը ինչպես կանոնավոր գործունեության, այնպես էլ զարգացման գործում՝ շեշտը դնելով վերջնական արդյունքի վրա (նկ. 2):



Նկ. 2. Գործընթացային մոտեցման դիագրամ

Մուտքեր

Որակի ոլորտի քաղաքականության իրականացում (որակի ոլորտի նպատակների իրականացմանը ուղղված միջոցառումների անցկացում).
դասախոսական կազմի գնահատում,

– գործունեության համեմատություն նմանատիպ այլ ուսումնական հաստատությունների փորձի հետ,
– որակի գծով աշխատանքների արդյունքները,
– աուդիտորական ստուգումների պլանի կատարում, դիտողությունների քանակը և դրանց շտկման հետ կապված աշխատանքներ, պլանավորված կանխարգելող գործողությունների կատարում, ինքնագնահատման արդյունքներ,
– աշխատանքներ ուսումնական կենտրոնի անձնակազմի հետ (ուսուցման ծրագրի կատարման մասին տեղեկատվություն, ուսուցման արդյունավետության որոշում, անձնակազմի բավարարվածություն, պարգևատրումներ):

Ելքեր.

– որակի ոլորտում նոր նպատակների առաջադրում, գործընթացների և որակի կառավարման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ, ուսումնառողների պահանջներին համապատասխան նոր կրթական ծառայությունների արդիականացմանն ուղղված պլաններ,
– անձնակազմի ուսուցման պահանջի ձևավորում,
– ռեսուրսների պահանջի ձևավորում,
– կազմակերպական կառուցվածքի համապատասխանության գնահատում՝ ուսումնական կենտրոնի կառավարման գործընթացային մոտեցմանը համապատասխան:

Ինչպես. օժանդակ գործընթացներ, մեթոդներ:
Ինչով. միջոցներ, նյութեր, սարքավորումներ:
Ում հետ. մարդիկ, կարողություններ, հմտություններ, ուսուցում:

ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Ցանկացած կազմակերպության աշխատանքային գործունեության արդյունավետությունը հնարավոր է բացահայտել իրականացված ստուգումների (այսուհետ՝ աուդիտ) արդյունքները վերլուծելով:

Հաստատությունը, համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9001ստանդարտի, պետք է պլանավորված պարբերականությամբ անցկացնի ստուգումներ՝ համոզվելու համար, որ որակի համակարգը համապատասխանում է կազմակերպության կողմից մշակված որակի կառավարման համակարգի պահանջներին:

Այդ նպատակով հաստատությունը պետք է.

- պլանավորի, մշակի, ներդնի և աշխատանքային վիճակում պահի աուդիտի ծրագիրը՝ հաշվի առնելով ստուգվող գործընթացների կարևորությունը, կազմակերպության վրա ազդող փոփխությունները և նախորդ աուդիտների արդյունքները,
- սահմանի աուդիտի չափանիշները և յուրաքանչյուր աուդիտի ոլորտը,
- իրականացնի անկողմնակալ և օբյեկտիվ աուդիտ,
- ապահովի աուդիտի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը համապատասխան ղեկավարությանը,
- առանց ուշացման իրականացնի համապատասխան ուղղիչ և կանխարգելիչ գործողությունները,
- գրանցի և պահի համապատասխան փաստաթղթավորված տեղեկատվությունը՝ որպես աուդիտի ծրագրի իրացման և ստացված աուդիտի արդյունքի վկայություն:

Երևանի պետական հումանիտար քոլեջում **որակի ներքին** ստուգման (**Ներքին աուդիտ**) պատասխանատվությունը դրված է որակի ապահովման կպատասխանատու վրա:

Ներքին ստուգումներն անցկացվում են.

- տնօրենի կողմից հաստատված ներքին ստուգման (աուդիտի) պլանի իրագործման նպատակով,
- հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համապատասխան մակարդակի ապահովման նպատակով:

Ներքին ստուգումների ժամանակ կարող են ստուգվել նաև.

- առանձին ստորաբաժանումները,

– ուսումնական գործընթացները (դասընթացների, քննությունների և փորձառության (պրակտիկայի) կազմակերպում և իրականացում, ուսումնական պլանների, ծրագրերի կազմում)),

– դասախոսական կազմի ապահովումը և այլ գործընթացներ, որոնք ուղիղ կապ ունեն կրթության որակի հետ:

Ներքին ստուգումն անցկացվում է կանոնավոր կերպով, յուրաքանչյուր ստորաբաժանման համար տարին մեկ անգամ (անհրաժեշտության դեպքում կարելի է անցկացնել արտապլանային ստուգում՝ տնօրենի որոշմամբ և հրամանով: Ստուգումների (աուդիտների) անցկացման պլանավորումն իրականացվում է տարեկան ժամանակացույցի ձևով, որը կազմում է ներքին ստուգման (աուդիտի) խմբի ղեկավարը կամ որակի ապահովման կառավարիչը՝ տնօրենի հաստատմամբ:

Ներքին աուդիտի ծրագրերին վերաբերվող հաշվետվությունները և այլ փաստաթղթեր պահվում են ներքին աուդիտների խմբի ղեկավարի մոտ <u>երկու տարի</u>: Նշված ժամկետը լրանալուն պես հաշվետվությունները փոխանցվում են փաստաթղթավորման պատասխանատուին՝ արխիվացման նպատակով:

Ներքին ստուգման (աուդիտի) գործընթացը

Ներքին ստուգման գործընթացն ընդգրկում է հետևյալ փուլերը.

– ներքին ստուգման անցկացման տարեկան ժամանակացույցի մշակում,
– ներքին ստուգման ծրագրի մշակում,
– ներքին ստուգման անցկացում,
– ներքին ստուգման արդյունքների մասին եզրակացությունների կազմում,
– ստուգման արդյունքների վերլուծության անցկացում, ուղղիչ գործողության (ՈՒԳ) և կանխարգելիչ գործողության (ԿԳ) որոշում,
– ՈՒԳ և ԿԳ ընթացքի հսկողություն,
– ղեկավարությանը ներքին ստուգման արդյունքների և ՈՒԳ/ԿԳ կատարման մասին տեղեկության ներկայացում,
– ղեկավարության կողմից որոշման կայացում:

Ներքին ստուգում իրականացնող աշխատակազմի նկատմամբ պահանջներ

Ընդհանուր պահանջներ ներքին ստուգման խմբի անդամներին.

– հանդիսանում է ընկերության հաստիքային աշխատակից,
– ունի բարձրագույն կրթություն,
– ունի ներքին ստուգման սկզբունքների, մեթոդների և կազմակերպման վերաբերյալ որակի բնագավառի չափորոշիչ (նորմատիվ) փաստաթղթերի պահանջների իմացություն (այդ թվում՝ ՀՍՏ ԻՍՕ 9001 և ՀՍՏ ԻՍՕ 19011 ստանդարտների),

- ունի անհատական շփումներ հաստատելու ունակություն, նրբանկատություն, հաղորդակցվելիություն, հավասարակշռվածություն, իրեն տիրապետելու ունակություն, աշխատունակություն,
- ունի իրատեսություն և առարկայականություն, վերլուծական և ճկուն մտածողություն, նպատակասլացություն,
- ունի մտքերը գրավոր և բանավոր արտահայտելու ունակություն,
- ներքին աուդիտ անցկացնելու համար հատուկ վերապատրաստում այնպիսի կազմակերպություններում, որոնք իրավունք ունեն այդպիսի վերապատրաստման անցկացման (վերապատրաստման պարբերականությունը ոչ պակաս, քան 3 տարին մեկ անգամ) և ներքին աուդիտորի կամ փորձագետի թեկնածուի որակավորման շնորհմամբ,
- տվյալ կազմակերպությունում աշխատելու կես տարուց ոչ պակաս աշխատանքային փորձ:

Ներքին ստուգման (աուդիտի) ոլորտը

Արդյունավետ գործունեություն ծավալելու նպատակով մշակված ընթացակարգերի համապատասխանությունը ստուգելու համար անհրաժեշտ է դիտարկել առնվազն հետևյալ ոլորտները.

- ուսուցման (դասավանդման և ուսումնառության) մեթոդներ,
- աշխատանքային ընթացակարգեր,
- շենքային հարմարություններ,
- մասնագիտության կրթական ծագրերի մշակում և հաստատում,
- ուսումնական և աշխատանքային ձեռնարկներ,
- դասընթացների պլանավորում, կազմակերպում և իրականացում,
- քննությունների պլանավորում, կազմակերպում և իրականացումը,
- փորձառության (պրակտիկայի) կազմակերպումն ու իրականացումը,
- աշխատակազմի ուսուցումն ու վերապատրաստումը:

Որակի ընթացիկ ստուգում

Որակի ընթացիկ ստուգման առաջնային նպատակն է ուսումնասիրել կոնկրետ դեպք կամ գործողություն, կամ փաստաթուղթ՝ հաստատելու համար, որ տվյալ միջադեպի և/կամ գործողության կատարման ընթացքում պահպանվել են սահմանված ընթացակարգերը և պահանջները:

Որակի ընթացիկ ստուգումը հիմնականում կատարվում է հետևյալ ոլորտներում.

- ուսուցման ստանդարտների մշակում,
- ուսումնական պլանների, ծրագրերի կազմում,
- դասախոսական կազմի ապահովում,

- ուսումնական նյութի, միջոցների ապահովում,
- լսարանների ապահովում,
- դասընթացների պլանավորում, կազմակերպում և իրականացում,
- քննությունների կազմակերպում և իրականացում,
- պրակտիկայի կազմակերպում և իրականացում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Որակի համակարգի շրջանակներում մշտադիտարկման նպատակն է ուսումնասիրել և որոշել համակարգի արդյունավետությունը, ինչպես նաև երաշխավորել, որ կիրառվող քաղաքականությունը, աշխատանքային և ուսումնական չափանիշները շարունակում են համապատասխանել առաջադրված պահանջներին: Մշտադիտարկման համար հիմք են հանդիսանում որակի ընթացիկ ստուգումների, իրականացված ստուգումների, ուղղիչ/կանխարգելիչ գործողությունների և վերահսկման արդյունքները:

Մշտադիտարկման խնդիրներն են.

- ուսումնական գործընթացի որակի վերլուծությանը և օբյեկտիվ գնահատմանը վերաբերող կազմակերպական միջոցառումների իրականացում,
- ԵՊՀՔ-ի որակի կառավարման համակարգի ֆունկցիոնալության և կրթական ծառայությունների վերաբերյալ տվյալների և ինֆորմացիայի պարբերաբար հավաքագրում և վերլուծություն,
- որակի կառավարման համակարգի փաստաթղթային բազայի ստուգում,
- որակի կառավարման համակարգի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության համակարգում,
- որակի ներքին աուդիտների կազմակերպում,
- ստորաբաժանումների գործընթացների վերլուծություն:

Մշտադիտարկման գործառույթներն են.

- կրթության որակի մշտադիտարկման մեթոդաբանական ապահովումը,
- կենտրոնի կրթական գործունեության որակի ցուցանիշների մշտադիտարկումը (անընդհատ հետազոտությունները, գնահատումը և փոփոխությունների կանխատեսումը),
- կրթության որակի մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը,
- ներքին աուդիտների աղրյունքների վերլուծությունը,

- ուսումնական կենտրոնի որակի կառավարման համակարգի և առանձին գործընթացների վերլուծությունը:

Մշտադիտարկման կազմակերպումը ենթադրում է.

- մշտադիտարկման խնդիրների որոշում,
- մշտադիտարկման ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, գործընթացների, առանձին գործողությունների համակարգում,
- ուսումնառողների առաջադիմության վերաբերյալ ինֆորմացիայի հավաքագրում և վերլուծություն,
- դասախոսական անձնակազմի մասնագիտական հմտությունների մակարդակի որոշում,
- կրթական ծառայությունների գործունեության որակին վերաբերող ինֆորմացիայի հավաքագրում և վերլուծություն,
- մշտադիտարկման արդյունքների վերլուծություն, ամփոփում և հրապարակում:

Մշտադիտարկման վերջնական նպատակն է.

- ուսումնական գործընթացի կատարելագործումը,
- կրթական ծառայությունների որակի բարելավումը:

Զեկույցներ և հաշվետվություններ

Քոլեջը պետք է ճշգրիտ և ամբողջական զեկույցներով և հաշվետվություններով հաստատի որակը երաշխավորող ընթացակարգերի արդյունքները: Զեկույցները կարևոր տվյալներ են անհամապատասխանությունների հիմնական պատճառները որոշելու և վերլուծելու համար: Որակի ապահովման կենտրոնը պատասխանատու է այդ փաստաթղթերի էլեկտրոնային և թղթային տարբերակներով պահպանման համար:

ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Որակի շարունակական բարելավման ռազմավարությունը Քոլեջի որակի ապահովման քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է, որը կոչված է ապահովելու դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավումը՝ ուսանողների և աշխատաշուկայի փոփոխվող պահանջմունքներին և կարիքներին համահունչ: Դրա հիմնական նպատակն է ստեղծել և գործարկել աջակցող արդյունավետ միջոցներ՝ Քոլեջի բոլոր մակարդակներում ուսման որակի կայուն բարձրացման համար: Այս ռազմավարության սկզբունքներ են հանդիսանում հետևյալները.

– ուսումնառության վերջնարդյունքների հիման վրա կրթական ծրագրերի մշակումը և իրականացումը, որոնք բովանդակությամբ և մատուցման ձևով գրավիչ են ուսանողների համար, համապատասխանում են գործատուների և մասնագիտությունների արդի պահանջներին և բարձրացնում են շրջանավարտների աշխատանքի անցնելու հնարավորությունները,
– ուսուցման կազմակերպման այլընտրանքային ճկուն ձևերի ներմուծում՝ ուսուցման և արտադրական փորձառության փուլերի զուգակցման, ուսուցման կազմակերպմանը ներուժային գործատուների ներգրավման, հաճախումների ճկուն ռեժիմի և ուսուցման առցանց ձևերի կիրառման միջոցով,
– դասավանդման որակի, արդյունավետության և մասնագիտական չափորոշիչների կատարելագործում՝ դասախոսական կազմի որակական ցուցանիշների բարձրացման, մասնագիտական կատարելագործման և որակավորման բարձրացման, դասավանդման նոր մեթոդների և կրթակարգերի ներմուծման ճանապարհով:

Որակի համակարգի ուսուցում

Որակի համակարգի կառավարման պատասխանատուների համար նախատեսված ուսուցումը պետք է առնվազն ընդգրկի հետյևալը.

– ծանոթացում որակի համակարգի բովանդակության հետ,
– որակի կառավարում,
– որակը երաշխավորող ծրագրերի մասին ընդհանուր պատկերացում,
– որակի ձեռնարկ,
– ստուգման (աուդիտի) իրականացման ձևեր, միջոցներ,
– զեկույցներ և դրանց պահպանում,
– որակի համակարգի գործառույթային աշխատանքն Քոլեջում:

Որակի կառավարման դասընթացներ առկա են միջազգային և ազգային տարբեր կրթական հաստատություններում: Սակայն, Քոլեջում նույնպես դա կարելի է

կազմակերպել, իր մասնագիտական պաշարներով կամ համապատասխան վկայագրում և (կամ) հաստատում ունեցող հրավիրված մասնագետների միջոցով:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Դասախոսական կազմի ընդունելություն

ԵՊՀՔ-ի ղեկավարությունը սահմանում և ապահովում է անհրաժեշտ ռեսուրսներ՝ կրթության որակի ապահովման, դրա արդյունավետության բարձրացման և սպառողների բավարարվածության համար: Կրթական ծառայություններ մատուցող հաստատությունը պետք է ապահովի համապատասխան կրթություն, գիտելիք, հմտություններ և փորձ ունեցող աշխատակազմի առկայություն:

Դասախոսական կազմի ընդունելությունը և ընտրությունը կատարվում է համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24 դեկտեմբերի 2020 թվականի 48-Ն հրամանի (Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման մասին):

Դասախոսական կազմի վերապատրաստում

Անձնակազմի իրազեկվածության և ունակությունների բարձրացման համար քոլեջում նախատեսված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուսուցում: Կրթական գործընթացների կատարելագործման և որակի բարելավման, գիտելիքների մակարդակի ընդհանուր ապահովման համար քոլեջի դասախոսները պարբերաբար մեթոդական վերապատրաստում են անցնում ՄԿՈՒԶԱԿ-ում, ինչպես նաև՝ մասնագիտական վերապատրաստումներ տեղական և արտասահմանյան տարբեր կազմակերպություններում:

Քոլեջի դասախոսական կազմի վերապատրաստումներն իրականացվում են N 1058-Ն բրամանի, կարգի 3-րդ, 6-րդ կետի, N 1009-Ն, հավելված 2, 14-րդ կետ, 4-րդ ենթակետի, հավելված 3, 14-րդ կետ, 3-րդ ենթակետի, N 1210-Ն, հավելված 2, 14-րդ կետ, 3-րդ ենթակետի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ուսումնական գործընթացը կազմակերպչական և դիդակտիկ միջոցառումների կառուցվածքային համակարգ է, որն ուղղված է կրթական որոշակի մակարդակի պահանջների կատարմանը՝սահմանված պետական (միջազգային) չափանիշներին համապատասխան: Մյուս կողմից, դա շարունակական և փոփոխական գործընթաց է, որը վերաբերում է դասավանդման և ուսումնառման մեթոդներին: Այս գործընթացում ցանկացած ձախողում պայմանավորված է ոչ պատշաճ կազմակերպչական մոտեցումներով:

ԵՊՀՔ-ում հաստատված հիմնական ուսումնական դասընթացը կազմված է տեսական գիտելիքների ուսուցման, գիտելիքների ստուգման, գործնական հմտությունների ուսուցման և գնահատման փուլերից:

Հիմնական ուսուցման տևողությունը միջին մասնագիտական կրթության համար 3-4 տարի է ըստ բաժինների առանձնահատկության:

Դասավանդման որակի գնահատում

Քոլեջում դասավանդման որակը գնահատվում է տնօրենի, որակի ապահովման կենտրոնի և ուսումնական բաժնի կողմից, դասալսումների միջոցով դասավանդման մեթոդների արդիականության մակարդակը պարզելու և դասավանդման մոտեցումների կիրառման աստիճանը որոշելու համար՝ համապատասխան ստուգաթերթերի օգնությամբ

Քոլեջի ուսանողները մասնակցում են դասընթացի և դասախոսի գնահատմանը հարցումների միջոցով, նախապես կազմված հարցաթերթերով: Դասավանդման որակի գնահատումը թույլ է տալիս բացահայտել գոյություն ունեցող անհամապատասխանություններն ու թերացումները և ձեռնարկել միջոցներ՝ դասավանդման մեթոդաբանության վերափոխման և ուսումնառության գործընթացների բարելավման համար:

Ուսումնառության արդյունքների գնահատում

ԱՈՒԿ-ում ուսանողների գիտելիքների գնահատումն ըստ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (մոդուլների) աշխատաժամածավալի, պարապմունքի ձևի և առարկայի կարևորության բաժանվում են.

- եզրափակիչ գնահատումով (քննական) առարկաների,
- առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքային) առարկաների:

Ընթացիկ և եզրափակիչ գնահատմամբ քննություններն անցկացվում են գրավոր կամ բանավոր: Առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքային) առարկաները գնահատվում են կիսամյակի ընթացիկ ստուգումների, գործնական աշխատանքների

կատարման, սեմինարների (դիպլոմային, կուրսային աշխատանք) կատարողականի ստուգման միջոցով:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Որակավորումների ազգային շրջանակում առկա որակավորումների վերևից ներքև քարտեզագրումը և, հետևաբար, դասընթացի մակարդակում ուսումնառության արդյունքների սահմանումը նպաստում է մասնագիտության կրթական ծրագրի համադրելիությանն ազգային և միջազգային մակարդակներում: Մասնագիտության կրթական ծրագրի մշակումն, իր հերթին, ապահովում է մեկ այլ հարթակ կրթական ծառայությունների որակը սահմանելու, ապահովելու և բարելավելու համար: Այս առումով, ուսումնական հաստատությունները պետք է երաշխավորեն, որ քոլեջում գործող ընթացակարգերն արդյունավետ են և համապատասխանում են կրթական չափորոշիչներին: Հետևաբար, յուրաքանչյուր քոլեջ պետք է սահմանի ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, ինչպես նաև առաջնորդվի դրանցով: Այս մոտեցումը նույնպես առաջնորդվում է “պլանավորում–իրականացում–ստուգում-բարելավում” սկզբունքով:

ԵՊՀՔ-ում միջին մասնագիտական կրթության իրացման համար հիմք են հանդիսանում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից մշակված կրթական չափորոշիչները, ուսումնական պլանները, ուումնամեթոդական ուղեցույցներն ու ձեռնարկները:

Մասնագիտական կրթական ծրագրերի գնահատումը

ԵՊՀՔ-ում մասնագիտական առարկայական/կրթական ծրագրերի գնահատումը հիմք է հանդիսանում նրա բաղադրիչների որակի բարելավման, որակի ապահովման մշակույթի ձևավորման և հաստատման, ինչպես նաև տվյալ ծրագրի առաքելությանը համապատասխանեցման համար սահմանված նպատակներին և կրթական չափորոշիչներին:

ՄԿԾ-ների որակի մշտադիտարկման/գնահատման խնդիրներն են.

- ստուգել նրա բաղադրիչների (օբյեկտների) վիճակը,
- մշադիտարկել ըստ գնահատման ցուցիչների,
- բացահայտել անհամապատասխանությունները,
- կազմակերպել ուղղիչ գործողությունները,
- բարելավել ծրագրի որակը:

Գնահատման առարկաներ (օբյեկտներ) են հանդիսանում՝

- ուսումնական պլանը,
- առարկայական ծրագրերը,
- դասավանդման գործընթացը,
- ուսումնառության արդյունքները,
- դասավանդման ռեսուրսները,
- ուսանողների գնահատման մեթոդները:

ՄԿԾ-ները մշտադիտարկվում են համաձայն Քոլեջի <<Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման>> կարգի (հաստատված՝ 30.08.2022թ)

Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ

ԵՊՀՔ-ի գործունեության հիմնական ուղղվածություններից է լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցումը՝ կրթական ծրագրերով լիարժեք ուսումնառության, շարժունության ապահովման, շրջանավարտների աշխատանքի տեղավորման համար: Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների նպատակներն ուղղված են քոլեջի առաքելության և հստակ ռազմավարական ուղղությունների և խնդիրների իրականացմանը: Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններն ուղղված են ուսանողների կողմից կրթական ծրագրերի լիարժեք յուրացմանը, ուսանողի մոտ մասնագիտական հմտությունների խթանմանը, ուսանողին օժանդակմանը ուսանողական կյանքում:

Քոլեջում իրականացվող ծառայությունների հիմնական նպատակն է ուսանողի կրթական կարիքների բացահայտումը, ուսանողին աջակցումը և ուղղորդումը ուսումնառության տարբեր փուլերում: Գործունեության հիմնական նպատակներն են՝

- անհատի պատրաստումը, որը կարողանա ծառայի հասարակությանը և ադապտացվի մասնագիտական և սոցիալական ոլորտներում,
- լրացուցիչ ծառայությունների ստացման հնարավորությունը՝ հաշվի առնելով ուսանողների կրթական կարիքները,
- ուսանողի մոտ ժամանակակից գիտելիքների մակարդակի ձևավորումը,
- ուսանողի շարժունության և աշխատաշուկա մտնելու համար պայմանների ստեղծումը:

Գործընթացների իրականացման համար լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունները մատուցող կառուցվածքային ստորաբաժանումները և գործընթացների պատասխանատուները կազմում և առաջնորդվում են աշխատանքային պլաններով՝ հաշվի առնելով ծառայության ուղղվածությունը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ (ԱՈՒԴԻՏԻ) ՊԼԱՆ

(Տնօրենի հաստատմամբ)

N	ՍՏՈՒԳՄԱՆ ՈԼՈՐՏԸ/ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	Ուսումնական ծրագրեր	ԱՊՍ											
2	Ուսումնական և աշխատանքային ձեռնարկներ	ՊՍ											
3	Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում (ընթացքում)												
4	Ուսանողական խորհուրդ												
…	…… և այլն												

Ծանոթություն.

ՊՍ- պլանային ստուգում. Պարբերական ներքին ստուգում, որն անցկացվում է պլանավորված ժամկետներում /**ԻՍՕ 9001, 19011**/

ԱՊՍ- արտապլանային ստուգում. Ստուգում, որը կատարվում է ղեկավարության որոշմամբ՝ ի լրումն պլանավորված ստուգման… /**ԻՍՕ 9001,19011**/

Հավելված 2

Իրականացված ներքին ստուգման արդյունքների պարզաբանում

ՀԻՄՆԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (նշել անհամապատասխանությունը և նկարագրել պատճառը)

_____
_____
_____

ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (նկարագրել ձեռնարկվող ուղղիչ գործողությունները)

_____
_____

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (նկարագրել ձեռնարկվելիք կանխարգելող միջոցառումները՝ հետագայում նմանատիպ խնդիրներից խուսափելու համար)

_____
_____

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայտնաբերված անհամապատասխանություն	Պատասխանատու բաժին/կատարող	Գործողության կատարման վերջնաժամկետ

Ստուգված բաժնի պատասխանատուի անուն, ազգանուն, ստորագրություն

_____ _____

ԱՄՍԱԹԻՎ <<_____ >>_____202 թ.

Հավելված 3

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Ա/Ա _____ *Ամսաթիվ* _____

1. Տարիքը՝ 1. մինչև 35 տարեկան 2. 36-45 տարեկան

3. 46-63 տարեկան 4. 63 տ-ից բարձր

2. Նշել զբաղվածությունը, որպես դասավանդող.

1. լրիվ դրույք 2. կես դրույք

3. ժամավճար 4. Այլ, նշել

3. Մասնագիտությունը _____

4. Մասնագիտական ստաժը _____

5. Պաշտոնը _____ _____

6. Գիտական աստիճանը/ կոչումը ____ _____/_____

7.Հրատարակված գիտական աշխատություններ/հոդվածներ/զեկույցներ

_____

_____

8. Արդյո՞ք կարող եք օտար լեզվով դասավանդել:

1. Այո 2. Ոչ

Եթե այո, ապա խնդրում ենք նշել այն օտար լեզուները, որոնցով կարող եք դասավանդել:

1. Ռուսերեն 2. Անգլերեն 3. Այլ, նշել _____

9. Ունե՞ք օտար լեզվի բարելավման համար վերապատրաստման կարիք:

1. Այո 2. Ոչ

Եթե այո, ապա խնդրում ենք նշել լեզուները:

1. Ռուսերեն 2. Անգլերեն 3. Այլ _____

10. Արդյո՞ք Ձեր ունեցած համակարգչային հմտությունները բավարար են Ձեր աշխատանքային գործունեության իրականացման համար:

1. Այո 2. Ոչ

11. Կցանկանայի՞ք մասնակցել համակարգչային հմտությունների բարելավմանն ուղղված վերապատրաստման դասընթացների:

1. Այո 2. Ոչ

12. Կցանկանայի՞ք դասավանդման ժամանակակից մեթոդների վերաբերյալ վերապատրաստման դասընթացի մասնակցել:

1. Այո 2. Ոչ

13. Արդյո՞ք կրթական ծրագրի մշակման փորձ ունեք:

1. Այո 2. Ոչ

14. Ընդհանուր առմամբ Ձեր գործունեության բարելավման համար ինչպիսի՞ վերապատրաստումների կարիք ունեք:

1. _____

2. _____

3. _____

15. Վերջին վերապատրաստման

Տարեթիվը _____ _____

Վայրը _____

Վերապատրաստող կազմակերպության անվանումը _____

Դասընթացի անվանումը

_____

Հավելված 4

ՈՒՍԱՆՈՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի՛ ուսանող, Դուք մասնակցում եք ուսանողի կարիքների վերհանման հարցմանը: Խնդրում ենք լրացնել հարցաթերթը՝ պարզելու համար ԵՊՀՔ-ից Ձեր ունեցած ակնկալիքները: Այդպիսով Դուք կնպաստեք հաստատության կրթական և օժանդակ գործընթացների բարեփոխմանը:

1.Ուսանողի Ա/Ա _____

2. Բաժինը _____ _____

3. Ընդունվելու տարեթիվը _____

4. Ուսուցման ձևը՝

- առկա
- հեռակա

4. Քաղաքացիություն՝

- ՀՀ
- ԼՂՀ
- այլ, նշել _____

5. Մշտական բնակության վայր (քաղաք, մարզ, երկիր) _____

6. Ո՞ր թվականին եք ավարտել հիմնական/ավագ դպրոցը _____ _____ **թ.**

7. Ո՞ր տեղ եք սովորել մինչև ԵՊՀՔ ընդունվելը

_____

8. Սահուն կերպով ի՞նչ օտար լեզուների եք տիրապետում.

- ռուսերեն
- անգլերեն
- այլ, նշել _____

9. Հիմնական/ավագ դպրոցում սովորել եք.

- գերազանց
- լավ
- բավարար

10. Դպրոցում սովորելուն զուգընթաց, հաճախե՞լ եք որևէ արվեստի կամ արհեստակցական խմբակի.

- սպորտ
- երգ/երաժշտություն
- պար
- արվեստ (նշել _____)
- աշակերտական խորհուրդ
- այլ, նշել _____

11. Եթե այո՛, ապա ի՞նչ հաջողություններ եք ունեցել

Նշել _____

12. Ինչո՞ւ եք ընտրել այս ուսումնական հաստատությունը

- ծնողների խորհրդով

- ընկերների խորհրդով
- նախընտրած մասնագիտությամբ լավագույն կրթությունը տալիս է այս ուսումնական հաստատությունը
- այլ, նշել _____

13. Ինչո՞ւ եք ընտրել Ձեր մասնագիտությունը.

- պահանջված է…այս մասնագիտությամբ աշխատանք գտնելն ավելի իրատեսական է…
- այս մասնագիտության համար ուսման վարձն հասանելի է
- ճանաչում եմ մարդկանց, ովքեր հաջողության են հասել այս մասնագիտության շնորհիվ
- այլ, նշել _____

14. Ինչպե՞ս կգնահատեք քոլեջում ուսումնական գործընթացների կազմակերպումը.

- դրական
- բացասական
- չեմ կարող ասել

15. Արդյո՞ք ունեցել եք դժվարություններ քոլեջում ինտեգրվելու և ինչպիսի դժվարություններ ունեք հիմա:

- այո
- ոչ

Եթե կան՝ խնդրում ենք նկարագրել ----------
---------- ----------
---

16. Ձեզ համար ինչքանո՞վ է կարևոր, որ ԵՊՀՔ-ը ցուցաբերի որոշակի աջակցություն և ապահովի Ձեր առօրյայի կազմակերպումը.

1. մասնագիտական աջակցություն (1) (2) (3) (4) (5)
2. աջակցություն ուսումնառության ընթացքում (1) (2) (3) (4) (5)
3. աջակցություն վարչական անձնակազմի կողմից (1) (2) (3) (4) (5)
4. ուսումնառության ռեսուրսների ապահովում (1) (2) (3) (4) (5)
5. կարիերայի զարգացմանն ուղղված աջակցություն (1) (2) (3) (4) (5)
6. մշակութային, մարզական և այլ խմբակների կազմակերպում, միջոցառումների իրականացում (1) (2) (3) (4) (5)

*Գնահատումն իրականացվում է **5** միավորանոց սանդղակով, որտեղ 5-ն ամենաբարձր միավորն է, իսկ 1-ը՝ ամենացածրը:*

17. Մասնակցու՞մ եք ուսանողական խորհրդի աշխատանքներին.

- **ոչ**
- **այո**

Եթե ոչ՝, ապա ինչու՞

_____
_____

18. Ըստ Ձեզ, ինչպիսի փոփոխություններ/բարեփոխումներ պետք է իրականացվեն քոլեջում՝ կրթական միջավայրն ավելի լավը/մոտիվացնող դարձնելու համար.

_____
_____
_____

Հավելված 5

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի՛ ուսանող, Դուք մասնակցում եք պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցմանը: Հարցումն անանուն է: Ձեր անկեղծ և օբյեկտիվ գնահատականները կնպաստեն ուսանողի պրակտիկայի որակի և արդյունավետության բարձրացմանը:

Մասնագիտությունը _____

Ուսումնական պրակտիկա ☐ **Արտադրական պրակտիկա** ☐

1. **Որտե՞ղ եք անցկացրել պրակտիկան.**

_____

2. **Ձեզ համար բավարա՞ր էր պրակտիկայի տևողությունը.**

Այո ☐ Ոչ ☐

Եթե «ոչ», ապա ինչու՞.

_____

3. **Ստորև նշվածներից ո՞ր ուղղությամբ է Ձեր նախապատրաստվածությունը ոչ այնքան արդյունավետ եղել պրակտիկայի ընթացքում.**

- պրակտիկ աշխատանքների ժամանակ տեսական գիտելիքների պակասը
- պրակտիկայի կազմակերպման և վարման մեթոդիկան,

այլ _____

4. Որքանո՞վ է Ձեզ բավարարում պրակտիկայի ղեկավարի

տեսական գիտելիքները	1	2	3	4	5
գործնական հմտությունները	1	2	3	4	5

(խնդրում ենք գնահատել 1- 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը առավելագույնն է, 1ը՝ նվազագույնը)

5. Բավարարվա՞ծ եք արդյոք ԵՊՀՔ-ից ստացած մասնագիտական գիտելիքներից:

Այո ☐ Ոչ ☐

Եթե «ոչ», ապա ի՞նչ առաջարկություններ ունեք.

_____

_____ _____

_____

6. Պրակտիկան նպաստու՞մ է արդյոք մասնագիտական ունակությունների, կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Այո ☐ Ոչ ☐

Եթե «ոչ», ապա ինչո՞ւ: Խնդրում ենք մանրամասնել.

_____

_____

_____

7. Ինչպե՞ս է ազդել պրակտիկան Ձեր մասնագիտական ուղղվածության ձևավորման վրա.

- հաստատել է մասնագիտական ճիշտ ընտրությունը,
- ոչինչ չի փոխել,
- հակվել եմ այն մտքին, որ իմ մասնագիտությամբ չեմ կարող աշխատել,
- առաջ է բերել այլ պատկերացումներ;

8. Ձեր ընդհանուր գնահատականը և կարծիքը պրակտիկայի կազմակերպման և անցկացման որակի մասին. (խնդրում ենք գնահատել 1- 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը առավելագույնն է, 1ը՝ նվազագույնը)

1 2 3 4 5

9. Դիտողություններ և առաջարկներ

Շնորհակալություն

Հավելված 6

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Առարկայի/մոդուլի (կրթական ծրագրի) անվանումը՝

Բաժինը/Մասնագիտությունը՝

ՄԿԾ –համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ		
ՄԿԾ –ի նկարագրությունն ըստ ՈԱՇ-ի պահանջների	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ		
ՄԿԾ - ից ակնկալվող արդյունքը հստակ սահմանված է	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ		
Առարկայական ծրագրերի համապատասխանությունը ուսումնայկան պլաններին	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ		
ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ		
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ		
ՄԿԾ-ի մշտադիտարկման և վերանայման	Բավարար☐	Անբավարար☐

նախապատրաստական աշխատանքները		
Նշումներ	_____ _____	
ՄԿԾ-ի հաստատման վավերականության ժամկետը	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ	_____ _____	
ՄԿԾ-ի բովանդակության նկարագրությունը	Բավարար ☐	Անբավարար ☐
Նշումներ	_____	
ՄԿԾ-ի կազմման հիմքը (օրենքները, կանոնակարգող փաստաթղթերը) հստակ սահմանված է	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ	_____ _____	
ՄԿԾ-ի ավարտին շրջանավարտներին ընձեռնված հնարավորությունները	Բավարար ☐	Անբավարար☐
Նշումներ	_____ _____	
ՄԿԾ-ի, նրա ուսումնական պլանի և տվյալ ոլորտի հետազոտությունների միջև կապը	Բավարար ☐	Անբավարար ☐
Նշումներ	_____	
Մեթոդական խորհրդի նիստի արձանագրություն	Բավարար ☐	Անբավարար ☐
Նշումներ	_____	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

- ✓ Եթե հնարավոր չէ ստուգել նշված կետերից որևէ մեկը, ապա պետք է նշել պատճառը:
- ✓ Եթե կետը նշվել է որպես «Անբավարար», այն պետք է ունենա իր բացատրությունը:

Ստուգաթերթը կազմվել է <<Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույցի>> պահանջների հիման վրա:

Հավելված 7

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ



Ինքնավերլուծության ընթացքում ուսումնասիրվող տարրեր՝

- ներդրում (մարդկային և նյութական ռեսուրսներ և միջոցներ),
- մտադրություններ (նպատակներ),
- արտաքին միջավայր,
- ուսուցում և հետազոտություն,
- ծառայություններ,
- կառավարման գործընթացներ,
- արդյունքներ:

Ծանոթություն. Ձևաթուղթը կազմվել է <<Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույցի>> պահանջների հիման վրա:

ԶԵԿՈՒՅՑ

Ստորաբաժանում_____

Զեկուցող _ _____

Հավելված 8

Դասախոսի գնահատման թերթիկ

Սիրելի՛ ուսանո՛ղ, Դուք մասնակցում եք ԵՊՀՔ դասախոսի գնահատման հարցմանը: Հարցումն անանուն է, իսկ արդյունքներն օգտագործվելու են միայն ընդհանրացված տեսքով:

Գնահատումը կատարվում է **5** միավորանոց սանդղակով, որտեղ 5-ն ամենաբարձր գնահատականն է, իսկ 1-ը՝ ամենացածրը:

Դասախոսի Ա/Ա	Ունի պատշաճ պահվածք. խստապահանջ է, բարյացակամ ու հարգալից: Չի բացակայում և չի ուշանում դասերից:	Կարողանում է հետաքրքրություն առաջացնել իր առարկայի նկատմամբ: Նպաստում է ուսանողների ներգավվածությանը դասընթացին:	Նրբանկատ և համբերատար է նյութը դժվար յուրացնող ուսանողի նկատմամբ:	Գնահատում է արդարացի, անկողմնակալ է:	Նյութը շարադրում է պարզ ու հասկանալի:	Կարողանում է ապահովել լսարանի կարգապահությունը: Դասաժամն արդյունավետ է օգտագործում:	Խթանում է ուսանողների վերլուծական և քննադատական մտածողությանը: